- ՀՀ Արարատի մարզի Մասիսի համայնքապետարանը հայտարարում է մրցույթ «Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի Մասիս քաղաքի Կենտրոնական գրադարան» ՀՈԱԿ-ի տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար:

* Մրցույթը կկայանա 2023 թվականի դեկտեմբերի 13-ին՝ ժամը 12:00-ին, Մասիսի համայնքապետարանի շենքում/ ք. Մասիս, Կենտրոնական հրապարակ 4 /:

* Դիմումները ներկայացնել Մասիսի համայնքապետարանի վարչական շենք, հասցե՝ Կենտրոնական հրապարակ թիվ 4, 4-րդ հարկ, 415 աշխատասենյակ, քարտուղարության, անձնակազմի կառավարման և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժին, երկուշաբթիից ուրբաթ, ժամը 10:00-ից մինչև 18:00-ն: Դիմումներն ընդունվում են մինչև սույն թվականի դեկտեմբերի 1- ը ներառյալ:

Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը

- Դիմում.
- Մեկ լուսանկար 3x4 չափսի.
- Քաղվածք աշխատանքային գրքույկի կամ տեղեկանք աշխատանքային գործունեության մասին.
- Ինքնակենսագրություն.
- Անձնագիր, բարձրագույն կրթության դիպլոմի (արական սեռի անձինք՝ նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի) պատճենները.
- Տեղեկանք մշտական բնակության վայրից.
- Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում).
- Փաստաթղթերը ներկայացնել անձամբ, անձը հաստատող փաստաթղթով:

Սահմանված պահանջներն են՝

Մրցույթին մասնակցելու իրավունք ունեն տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար ներկայացվող պահանջները բավարարող, հայերենին տիրապետող, 18 տարին լրացած Հայաստանի Հանրապետության այն գործունակ քաղաքացիները ովքեր ունեն՝

- բարձրագույն կրթություն,
- համապատասխան բնագավառի առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ,
- օրենքով նախատեսված պարտականությունների կատարման համար անհրաժեշտ իրավական ակտերի իմացություն (ՀՀ Սահմանադրություն, Կրթության մասին ՀՀ օրենք և այլն),
- տրամաբանելու և տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն,
- ֆինանսատնտեսական գործունեության իրականացման կարողություն,
- համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն,
- աշխատանքի կազմակերպման և ղեկավարման անհրաժեշտ էթիկայի կանոնների իմացությունը: